ոչ կոչեցեալ Թուեցաւ 'ի կարգս կայսերաց՝ որ ոչ իշխեաց Յիտալիայ։

Գ։ Հաղորդուս Երկրորդ սկսաւ յամի Տեառն ՌԼ։ ինքնակալեալ ամս Ի։ Եւ պարապեաց աթոռն կայսերական ամս Գ։ Սա բազում հսկմամբ կամեցաւ զաշխարհ խաղաղութեամբ պահել. և մինչ էր սա յաւուր միում՝ յորսս, եմուտ ներքեաց 'ի տան գունղին Լ՚օրօլտոսի, որ փախուցեալ էր 'ի Կայսերէն, և 'ի զիշերին ծնաւ կինն Լ՚օրօլտոսի. և կայսրն լուաւ՝ թէ՝ ծնեալ տղայս քեզ ժառանգ լինելոց է, ապա հրամայեաց կայսրն իւրոց մտերմացն, զի տարցեն զտղայն 'ի տեղի ինչ և սպանցեն, և զսիրտն և զլեարդն բերցեն իւրն նշան։ Եւ նոքա նապաստակ մի սպանանեցին և զսիրտն տարան կայսերն նշան, և զմանուկն ձգեցին 'ի մորին. յետոյ կայսրն եղիտ զտղայն, և երեր առ կինն իւր՝ ոչ զիտելով՝ թէ ուր իցէ. և խորհեցան ասել՝ թէ՝ թագուհին ծնաւ զմանու-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան